

Գևորգ Էմին

Եվ մի աղջիկ ,մայթում խավար

Եվ մի աղջիկ ,մայթում խավար,
Քայլու՛մ է ու անձայն լալի՛ս…

Ինչու՞ է նա այդպես լալի՛ս…
Ու մոլորված գնում-գալի՛ս,
Նոր տարվա օ՛րն այս խանդավառ.

Գուցե նրա հե՛րթն է գալիս
Ջգալու՛, որ կյանքը, ավա՛ղ,
Հաճախ նաև… վի՛շտ է տալիս.

Դրա համար էլ նա՝ լալի՛ս,
Ձյունն ու արցունքը կո՛ւլ տալիս ,
Դեգերո՛ւմ է մայթում խավար.

Եվ կարծում է հավանորեն,
Թե էլ չի՛ գա բախտը նորեն
Եվ…անցե՛լ է անդառնալի…

Որտեղի՛ց այդ գիժն իմանա,
Որ ամե՛ն ինչ, այս ձյան նման,
Գալիս է, որ հալվի՛- գնա՛,
Եվ զո՛ւր է նա այդպես լալիս…

Յատուկ Պոէմ